խոէալացնել ու վարդապետն ներկայացնել հինը, անցեալը, *հետեւեալ խօսքերը կը դնէ իր գաղափարախօս–Ասլանի բերնին մէջ.*

«Բայց եղել են ժամանակներ, երբ մեր եկեղեցականները··· դրանց նման անբնական կեանք չէին վարում··· Նրանք գիտէին, թէ ի՞նչ է կեանքը, ի՞նչ է աշխարհը եւ ինչպէս պէտք է հոգ տանել նրա համար, որ մարդու ապրուստը հանգիստ ու բախտաւոր լինի··· Նրանք ժողովրդի հայրն էին··· եւ բոլոր սրտով նուիրել էին իրենց անձը ժողովրդի բարօրութեանը: Իսկ այժմ չի կարելի գտնել մի մարդ, որ այնպէս վայրենի, անզգայ եւ անտարբեր լինէր դէպի հասարակաց բարին, ինչպէս մեր կուսակրօն եկեղեցականը:

«Վանքն այն ժամանակ, այժմեան պէս, աշխարհային գործերից փախած եւ իրան երեւակայական հոգեւոր ցնորքների նուիրած, ծոյլերի բնակարան չէր: Վանքն այն ժամանակ, այժմեան պէս, շնորհավանաւորութեան, կախարդութեան եւ տեսակ տեսակ մոլութիւնների հանդիսարան չէր: Վանքն այն ժամանակ հոգեւոր եւ մարմնաւոր դպրոց էր, ուր անխոնջ միաբանութիւնը պարապած էր մանկտու կրթութիւնով, գրքերի թարգմանութիւնով, ինքնուրոյն հեղինակութիւններով եւ գիտութիւնն ու լոյսը ժողովրդի մէջ տարածելով:

«Եկեղեցականութիւնն այն ժամանակ, որպէս կրօնի, եկեղեցական եւ կրթութեան, նոյնպէս եւ հայրենիքի ու պետութեան հզօր պաշտպանն էր··· Եւ այն ժամանակ Հայաստանը երջանի՞կ էր···

«Այս ամէնը, ինչ որ գործում էր եկեղեցականութիւնը, քոլորովին ընդդէմ էր նրա կրօնական բնաւորութեանը: Բայց մեր եկեղեցականութիւնը այն ժամանակ մի նշանաւոր բացառութիւն էր կազմում ամբողջ քրիստոնէական աշխարհում.— Նա կատարեալ *ժողովրդական* էր, նա միացնում էր իր մէջ հոգեւոր եւ նիւթական կեանքը — իրական աշխարհը եւ երկինքը: Իսկ ա՞յժմ···

«Այժմ եկեղեցականը մեզ համար մի մեռած եւ անպիտանացած տարր է»···

Թունաւոր սլաքներ ունի մեր վիպագիր–հրապարակախօսը եւ հայ ազգի միւս, ունեւոր դասակարգի — բուրժուազիայի *դէմ: Նա գիտէ, անշուշտ, որ եղել են այդ ազգի մէջ Լազարեաններ, Սանասարեաններ, Մուրատ ու Ռափայէլներ, որոնք յաւերժացուցեր են իրենց յիշատակը հայրենաշէն գործերով: Նա ինքը եբախտաղիտութեան պարտք ունի հանդէպ հարուստ հայու մը, որու ծախքով հրատարակուեցան մէկ քանիսը իր հատորներէն: Բացառութիւններ միշտ կը գտնուին եւ այդ բացառութիւններու մասին չի ալ խօսիր Վիպասանը, այլ՝ գեղեցիկ արիութեամբ կը քարկոծէ ու կը նշանակէ հայութեան ցեղ–դասակարգը* in toto, *իր ամբողջութեան, ընդհանրութեան մէջ, անտարբեր եւ անկարեկիր դէպի ժողովրդի ցաւերը, կը հարուածէ անվերապահ ու անխնայ եւ անոր քննադատութիւնը տեղ-տեղ կը զարնուի սոցիալիզմի մեթոտներու մէջ:*

«Վանառականը ազգ եւ հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, որտեղ են նրա շահերը»,— *կ'ըսէ Ասլանը, մասնաւորելով իր խօսքը Թուրքիոյ հայ ամիրաներու, սարրաֆներու եւ վաշխառուներու մասին:*

— «Դուք տեսաք, կը բացատրէ նա Ֆարհատին, որ հայ դրամատէրը, հայ վանառականը մեր հասարակութեան բոլորովին աւերուած եւ վնասակար մասն է. նրանցից մենք ոչինչ բարիք չենք սպասում: Նրանք պաշտում են իրենց քսակը եւ աւելի ոչինչ···

«Մեր դրամատէրն, սկսած առաջին «ամիրայից» մինչեւ վերջին «քեռի Պետրոսը», աւազակներ են, ապրում են ժողովրդի արիւնով ու քրտինքով»···

Ուրիշ տեղ մը կ'ըսէ.

··· «Իսկ *ազգն* կը մնայ միշտ *ազգ*, որովհետեւ նա ոչ վարում է, ոչ ցանում է, ոչ հնձում է, եւ նրա սեղանը միշտ լի է եւ նոխ»···

Եւ կը հետեւի ջերմ ներբողանք հայ աշխատաւոր զանգուածի, *զոր նա կ'որակէ «ամբոխ» անունով.*

··· «Այնուամենայնիւ, մենք բոլորովին յուսահատ չենք, մենք ունինք մի, թէեւ անմշակ, բայց մեծ զօրութիւն — *ամբոխը*,— դա բաւական է»*)···

---

*) «*Կայծեր*», *հատ. Ա.* 453–465: